

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄԱՍԿ

Տարեկան դիմել 10 բուլի, կես տարվանը 6 բուլի.  
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակիի և տօն օրերէն)

Ֆայտարարութիւնը ընդունւում է ամեն լեզուով.

Ֆայտարարութիւնները համար վճարում են  
խաբանչիւր բառին 2 կոպեկ.

## ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միջոցներ մօրեկի դէմ.  
Կարեւոր բացատրութիւն. Կովկասում հիմնական  
թէյի առևտրի ընկերութեան մասին. Նամակ  
Շուշուբ. Նամակ Ներքին-Ախտայից. Ներքին լու-  
րեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բէլգրադի դէպ-  
քը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.  
—ԽՈՒՆԻ. ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍՍ. —  
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գործ-  
նական կաթնատնտեսութիւն.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԻՋՈՑՆԵՐ ՄՈՐԵԿԻ ԴԵՄ

Մօրեկը տարածված է Ղարաբաղում և, որպէս  
գրում են, ծածկել է թէ դաշտերը և թէ լեռները:  
Նրան ջնջելու համար հաղարաւոր մարդիկ, փոքր  
ու մեծ, տուն տեղ թողած՝ պատերազմ են  
մղում այդ սովաբեր կենդանու դէմ: Այդ չարիքը  
խեղճ երկրագործին վերջին յուսահատութեան է  
հասցրել և երկրագործը դուրս է իր ոչխարները,  
եղջերը Աստուծոն, թափօրներ է անում, սղում,  
կտծում է, որպէս զի կարողանայ ազատվել այդ  
պատուհասից:

Բնութեան մէջ ոչինչ չէ կայ փնտաւար, որ  
չը լինի նաև օգտաւէտ. ինչ բան մեղ փնտաւար  
է երևում, նաև ունի և իր օգուտը: Մօրեկին երկ-  
րագործի ամենակատաղի թշնամին է, որը մի  
քանի օրվայ մէջ ոչնչացնում է հողագործի տար-  
վայ և մինչև անգամ մի քանի տարիների ապ-  
րուտը, կտրում է հացը և թողնում է նրան քաղ-  
ցած և ամենատրեք սով է տարածում, բայց այդ  
փնտաւար կենդանին, ունի նաև իր օգտակա-  
րութիւնը, որն անհասկանալի է միամիտ գիւղա-  
ցուն: Մօրեկին առհասարակ գոյանում է եղեգ-  
նոտ սևահող անմշակ տեղերում, ուր երկրագոր-  
ծի գոլթանը շատ տարիներ չէ հերկել այդ հողը:  
Վաղախի միմեկում, սկսած Անդրկովկասեան  
երկաթուղու Պոլի կայարանից, Կուր գետի ափե-  
րում երևում են եղեգնոտ տեղեր, որոնք տարած-  
վում են մինչև Արաքսի և Կուրի միանալու տեղը,  
Մուղանի անապատը. ահա այդ եղեգնոտ անմշակ  
տեղից է առաջանում մօրեկը Կովկասում, այդ  
տեղ մօրեկին առատ սնունդ ունենալով և չը  
հանդիպելով խոչընդոտի՝ սկսում է մեծ բազմու-  
թեամբ զարգանալ, բազմանալ և սկսում է արշա-

ւել երկրի խորը սնունդ որոնելու: Մօրեկին  
խակապէս սև հողի արտադրութիւն լինելով, կարե-  
ւի է ասել, որ սատկելուց յետոյ՝ տեղն ու տեղ  
սևահող է, և այն դաշտերը, որոնք ծածկված են  
եղել մօրեկներով, որոնք խալա ջնջված են լի-  
նում, սատակի պարարտ են լինում, ծածկվե-  
լով բարակ, աննկատելի սևահող չերտերով, որոնք  
արհեստական կերպով պարարտացնելուց առաւել  
մեծ օգուտ են տալիս երկրագործին:

Բայց խելացիութիւն չէ, հողը պարարտացնե-  
լու համար թոյլ տալ որ մօրեկը զարգանայ այն  
յուսով, որ ապագայում մեր դաշտերը մեղ կըրկ-  
նապատկը կը տան, այլ ամեն ջանք, ամեն մի-  
ջոց պէտք է գործ դնել ջնջել մօրեկի հետը:  
Ամեն մի նորեկ չարիքի առաջը պիտի առնել  
վաղօրոք և չուշացնել. քանի ուշ, այնչափ գործը  
ծանր և բարդ կերպարանք կը ստանայ և կը  
հանդիպենք մեծ դժուարութիւններ: Սակայն  
եթէ ուզում ենք, որ մեր թշնամուն յաղթած լի-  
նենք, պէտք է նախ ուսումնասիրենք մեր թշնա-  
մուն և գործ ունենանք նրա հետ. նոյնը և պիտի  
անել մօրեկին հետ:

Կան մի տեսակ կենդանիներ, որոնք ջանում  
են միայն իրանցից յետոյ ժառանգ թողնել և  
նու են դնում այնպիսի ապահով տեղերում, ուր  
իրանց մահից յետոյ ձուները չը փչանան և  
ձուից եղնող ձագուկը սկզբնորում սնունդ ունե-  
նայ: Կենդանիների այդ տեսակին պատկանում է  
մօրեկը:

Մօրեկը ձու է դնում աշնանը և ձուերը  
ամբողջ ձմեռը մնալով հողի տակ, գարնանը  
ընկնում են հետ գարնանում և և դուրս են սողում  
այդ ձուանից ձագուկներ, որոնք կերակրվում  
են հողով. կենդանու ընտելումը հարկադրում է  
իրան ձուեր դնել այնպիսի տեղերում, ուր ձուե-  
րը ցրտահար չը լինեն և դերձ մնան թռչուն-  
ներից: Այդ իսկ պատճառներից մօրեկը փորում  
է հողը մի որոշ խորութեամբ և ապա ձու է  
դնում: Այժմ մօրեկին նպատակը պարզ է, ուստի  
ամենալաւ միջոցն այդ ձուերը կտորելու,  
այն է, որ փոխանակ ժողովելու, աշնան վեր-  
ջին ամիսներում երկրագործը գոլթանով վարէ  
հողն այն խորութեամբ, ինչ խորութեամբ  
կերևան մօրեկի ձուերը: Վարելով, հողի տա-  
կի մասն երես է երկում և հետևապէս ձուերն  
էլ երես են ճնշում, որոնք կը ոչնչանան թէ ձմրան  
ցրտից, ձիւնից և թէ կը կտորեն թռչունները  
իրանց սնունդ հայթայթելով: Այդ գործողութիւնը

շատ շահաւէտ է, որով թէ սերմերը կը փչանան  
և թէ հողն որչափ շատ բերու, փորելու լի-  
նենք, այնչափ օգտակար է:

Ձուերից դուրս ելնող մօրեկին ձագուկները  
սկզբում շատ փոքր են լինում և թոյլ, և եթէ  
նրանց մայրը խոր է դրած լինում, այն ժամա-  
նակ նրանք չեն կարողանում դուրս սողալ խորի  
միջից և սատկում են. և այդ պատճառով էլ  
զարմանը նոյն վարած հողը, նորից պէտք է վա-  
րել և որչափ կարելի է խոր, որպէս զի չը փչա-  
ցած ձուերն էլ հողի տակով լինեն և խոր  
տեղ ընկնելով, ձուերից դուրս սողացող ձագուկը  
սատկեն տեղն ու տեղը:

Այս երկու միջոցները ամենալաւ միջոցներն  
են վաղօրոք այդ հիւրերի առաջն առնելու և եթէ  
հողագործը չօգտուից այս հանգամանքներից և  
չը խելացի թշնամուն իր ընի մէջ, այն ժամա-  
նակ նրա անելի գործը կը բարդիւի և պէտք է  
մեծ ճիւղ թափէ իր գործը թշնամու դէմ կուե-  
լու:

Մօրեկը ձուից դուրս դալով մի փոքրիկ դե-  
ռուն է, որն աննկատելի կերպով դուրս է սո-  
ղում հողի միջից և նման է լուի: Այդ կեն-  
դանիների կենսքը ուսումնասիրողներն ասում են՝  
որ այդ լուանման ձագուկները շատ են սիրում  
արևի տակ տաքանալ և նրանք մեծ բազմու-  
թեամբ վաղօրեան արեգակի տաք սկսում են  
տաքանալ:

Ուստի այս դէպքից էլ կարելի է օգտվել:  
Պէտք է մօրեկսով ծածկված դաշտերում, սրբի-  
ւել ծղնոտ—չոր խոտ և սպասել, որ այդ  
սփռված խոտը ծածկվի սև խաւով. նշանակում  
է, որ մօրեկին ձագուկներն են, որոնք պատել  
են խոտը. երբ օղը տաքանալու է, արևի ձա-  
ռաղայթների տակ նրանք սկսում են սիրով  
վել, ուստի հարկաւոր է կրակ տալ, այլևս խո-  
տերը, որոնք հետ և կայդվին մօրեկի ձագուկը: Այս  
գործողութիւնը պէտք է կրկնել այնքան, քանի որ  
մօրեկը չէ սկսել ցատկել. երբ սկսում է ցատ-  
կել, այլ ևս իղուր է այդ միջոցը: Այն ժամանակ  
մնում է միայն բանիւրով, ցախաւենիւրով պատե-  
րազմել ցատկող մօրեկին հետ. արտերի շուրջը  
կանխապէս պէտք է փորել մեծ առուներ և ապա  
սկսել կտորածը և աւելած, ջարդած մօրեկը  
պէտք է անել այդ առուների մէջ ու հող տալ  
վրան: Բայց ցատկող մօրեկը շատ դժուար  
է կտորելու և նա շուտ թխաւորում է ու սկսում  
է թռչել. բխաւոր երամներով անցնում է նա

հարկաւոր վերստեր և ոսկեգոյն արտերի տեղ՝  
թողնում է ամալի դաշտեր, ժողովրդի մէջ լաց  
ու կոծ ու համայն սով տարածելով:

Խ. Գ.

## ԿԱՐԵՒՐ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՀԻՄՆԱԿԵԼԻ ԹԵՅԻ ԱՌՆԵՏԻՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ

«Մշակ» լրագիրը հաղորդեց համառօտ ձևով  
Կովկասում հիմնվելի թէյի առևտրի ընկերու-  
թեան ամսին 12-ին կայացած ժողովի մասին:  
Անհրաժեշտ եմ համարում բացատրել հետևեալը  
ի դիտութիւն տեղիս և օտարերկրեայ հետաքը-  
քովոյ հասարակութեան՝ կազմվելի ընկերութեան  
ծրագրի և ժողովի մասին: Ամսի 12-ին ընկե-  
րութեան առաջին ժողովում, Թիֆլիսի առև-  
տրական վարչութեան դահլիճում, հիմնվելի ըն-  
կերութեան նպատակը բացատրելուց յետոյ,  
կարգացվեց այդ ապագայ ընկերութեան ծրա-  
գիրը 67 յօդուածներից բաղկացած ժողովը,  
որը մեծ մասամբ բաղկացած էր վաճառականնե-  
րից՝ կազմած ծրագիրն ընդունեց, ներարկելով  
փոփոխութեան միայն նրա հետևեալ կետերը.  
ա) ընկերութեան հիմնական դրամադուլը, որը  
ծրագրում նշանակված էր 150 հազար ռուբլի,  
ժողովը մեծացրեց մինչև 300 հազար ռուբլի. բ)  
Բաժինները (наш) 100 ռուբլու փոխարէն 200  
ռուբլի դարձրեց, և գ) Տաս բաժին ունեցողն  
իրաւունք ունի մէկ ձայնի: Ամեն մի անդամը  
երկու ձայնից աւելի իրաւունք չէ կարող ունե-  
նալ, թէկուզ այդպիսին ունենայ էլ 100 հա-  
զար ռուբլու ակցիաներ, և երկու ձայն էլ կարող  
է ունենալ հաւատարմաթղթով: Ընկերութեան  
անդամը, եթէ նա թէյ ծախող վաճառական է,  
իր ունեցած բաժնի համեմատ, կարող է կրեդիտ  
ունենալ 75% դուստրի, որոշ պայմաններով:  
Բաժինները լինելու են անուանի. եթէ անդամնե-  
րից մէկը կամենայ իր բաժինը ծախել, այդպի-  
սին իրաւունք ստանալու համար նախ պէտք է  
յայտնէ ընկերութեան վարչութեանը: (Գնեղու-  
թեան ակցիաների կարող են լինել երկու տեսի  
անձինք և ամեն երկրացի: Ընկերութիւնը պիտի  
ստանայ թէյի ուղղակի իր իսկական տեղից—  
Չինաստանից, նախելով ժամանակին՝ Ժողովին կամ  
ցամաքային (Սիբիրի վրայով) ճանապարհներով:  
Ընկերութեան վարչութեան անդամներ կարող են  
ընտրվել միայն այն անձինք, որոնք ունեն 20  
ակցիաներ և այդ ակցիաները պիտի մնան ընկե-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱԹՆԱՏՆԵՍՈՒԹԻՒՆ

#### I

Թէև այս տեսակ յօդուածներին տպագրութիւնը  
գլխաւորապէս թերթի պաշտօնն է, սակայն  
մեղանում արդիւնաբերութիւնների պահանջը դեռ  
ևս ըմբռնած չը լինելով, անկարելի է հրատարա-  
կել մասնագիտական թերթեր:

«Մշակ» յարգելի խմբագիրը, որի առաջնոր-  
դող զաղապարներից մէկն էլ գլխաւորապէս  
թեան և առհասարակ արդիւնաբերութիւնների  
տարածելն էր մեր հայերիս մէջ, բարեհաճել է  
տեղ տալ սոցիալական յօդուածներին, ինչպէս և  
տեղ տալ ընթերցողներին: Ուստի ես ևս օգտվե-  
լով այս առանձնաշնորհումից, կը սկսեմ բովան-  
դակութիւն և որքան կարելի է հասկանալի  
ընդունով նկարագրել կաթնատնտեսութեան ար-  
դիւնաբերութիւնը:

Դիւղական ամենազլխաւոր և ձեռնտու ար-  
դիւնաբերութիւններից մէկն էլ կաթնատնտեսու-  
թիւնն է, իր բոլոր բաժանմունքներով:

Կաթնատնտեսութեան հետ կապված է անաս-  
նապահութիւնը՝ հետևապէս և երկրագործութիւ-

նը, որովհետև էժան կաթ ունենալու համար  
պէտք է կովեր պահել և ոչ ուրիշից դնել, իսկ  
կովեր պահելու համար խոտ է հարկաւոր, որը  
ստացվում է երկրագործութեամբ:

Կաթնատնտեսութեան առաւելութիւնը միւս  
արդիւնաբերութիւններից այն է, որ սրանից  
ստացվում են մի շարք մթերքներ, որոնք ձրի ար-  
ժէն և որ գլխաւորն է ոչինչ չէ մնում առանց  
գործադրելու: Որինքն, իւր հանելուց կամ պա-  
նիր պատրաստելուց յետոյ մնացած կաթով  
(չիճուկ, թան, petit-lait), որից այլ ևս ոչինչ չէ  
կարելի կամ գրեթէ չէ կարելի արդիւնաբե-  
րել, չաղացնում են խոզեր և շատ տեղեր էլ՝  
հորթեր: Պահելով անասուններ՝ նրանցից հաւա-  
քած աղը—փէյլը գործ է անվում երկիրը պա-  
րարտացնելու համար:

«Կաթնատնտեսութիւնը», ասում է մի Ֆրան-  
սիացի նշանաւոր գլխաւորտես. «մեր երկրի հա-  
րստութիւնն ամենազլխաւոր աղբիւրն է կաղ-  
մունի»:

Եւ չը նայելով, որ կաթնատնտեսութիւնը  
ունի իր բազմակողմանի օգուտները, մեղանում  
գեռ շատ յետ է մնացած և ուշադրութիւն ան-  
գամ դարձնող չը կայ. չը նայած որ, ինչպէս և  
յետոյ կը տեսնենք, կարելի է շատ փոքր գումա-  
րով սկսել այս արդիւնաբերութիւնը և կարճ  
ժամանակում կրկնապատկել:

Կաթնատնտեսութեան ամբողջ զաղապարն է՝  
ստանալ որքան կարելի է լաւ և առողջ կաթ,  
պատրաստել ընտիր տեսակի իւղ, պանիր-  
ներ և ապա նրանց արտադրել:

Այն կաթնատնտեսները, որոնք դալում են քա-  
ղաքներից ոչ հեռու, նրանց համար աւելի ձեռն-  
տու է կաթը կթելուց անմիջապէս յետոյ ուղար-  
կել վաճառատեղի (բազար), նոյն դրութեամբ  
ծախելու: Եթէ տարածութիւնը շատ հեռու չէ,  
այնպէս որ կարող են շաբաթը 2—3 անգամ քա-  
ղաք գնալ, այնպիսիները պատրաստում են իւր  
և այնպէս արտահանում: Եւ վերջապէս, որոնք  
շատ հեռու են գտնվում, նրանք ստիպված են  
պանիր պատրաստել և միանգամից մեծ քանա-  
կութեամբ ուղարկել գլխաւոր կենտրոնները և  
կամ ուրիշ տեղութիւններ:

Ի՞նչ է կաթը:  
Կաթը, որ ծննդուց յետոյ տալիս են մեղ բոլոր  
ստիքաւոր \*) կենդանիները, մի սպիտակ և թանձ-  
րաւուն հեղուկ է: Կաթը սննդաբար կերակու-  
րներից մէկը լինելով, շատ տեղ, մանաւանդ գիւ-  
ղերում, աւելի են գործածում, քան միւսը:

Կաթը կազմում է թէ մարդուս և թէ բոլոր  
կաթնակեր կենդանիների առաջին կերակուրը,  
նա պարունակում է բոլոր սննդական մասերը

\*) Եթէ ունեցող կենդանիներ, առհասարակ  
բոլոր չորքոտանի կենդանիները:

կենդանիների մարմինը զարգացնելու—մեծացնե-  
լու համար:

Հասարակ կաթը, որը մենք միշտ գործ ենք  
ածում, բաղկացած է մի քանի մասերից, որոնք  
միացած ժամանակ հասարակ աչքով անտեսանե-  
լի են. 1) ամենամեծ քանակութեամբ պարունա-  
կում է ջուր, 2) բնագոյնի (կալէին-caséine) և  
սպիտակուց, 3) իւղային մասեր, 4) շաքար և 5)  
զանազան տեսակ աղեր:

Բնապայմանները կաթին այն սպիտակ  
մասերը, որոնք կտոր կտոր երևում են մաճնե-  
լուց յետոյ. կաթին այս մասն է, որից կազմվում  
պանիրը. բնագոյնի մի մասը հալված դու-  
թեամբ է, իսկ մեծ մասը հատիկների ձևով լող  
են տալիս կաթի մէջ, եթէ երկար ժամանակ  
կաթը մի հանդարտ տեղ պահենք, այս հատիկնե-  
րը նստում են ամանի յատակին. բնագոյնի այս  
հատիկները կարելի է տեսնել և այն ժամանակ  
երբ կաթը քամեց մազանման ծակոտկէն հողէ  
ամանների միջով, կաթը անցնում է, իսկ բնա-  
պանիրը մնում է ամանի մէջ:

Սպիտակուց (ալբումին - albumine), շատ  
նման է բնագոյնին. կաթին մէջ գտնվում է  
հալված դրութեամբ. սպիտակուցը տեսնելու հա-  
մար պէտք է չիճուկի հետ խառնել երկու ան-  
գամ շատ ալկոոլ (40 աստիճանի) և խկոյն կերե-  
ւան սպիտակ բշտիկներ:

Իւ դալիս մասերը բշտիկանման են և

բուժման մեղման միջոց ծառայութեան ժամանակամիջոցի լրանալը, որ է երեք տարի:

Ընկերութիւնը տարվայ հաշիւ կազմելուց յետոյ, գոյացած օգուտից պէտք է յատկացնէ 10% պահեստի դրամադրութիւն, մինչև այդպիսին հաւասարվի դրամադրութիւն 1/3 մասին, 12% վարչութեան անդամներին (որոնք երեք են), 3% փոխադասութեան ծառայողներին (բացի ուսմանից), 30% վարչական մասնագէտներին (3 հոգի) 2% Թիֆլիսում ապագայում բացվելի առևտրական ուսումնարանին, իսկ մնացելը այդ գումարը կարելի է գործարարել, ըստ ցանկութեան ընդհանուր ժողովի, ուրիշ ուսումնարաններին վրա, 2% բժշկական պետական համար թէյի գործարանում բանոց բանուորներին և նրանց ընտանեաց, իսկ մնացած 0%0 պիտի տրվեն ընկերութեան ակցիա ունեցողներին զուտ օգուտ, զիմիկէն:

Ընկերութիւնն իր գործունէութիւնը դադարեցնում է միայն այն ժամանակ, երբ որ կորցնէ ունեցած դրամադրութիւն 1/3 մասը:

Առաջին ժողովը որոշեց, որ կազմված ժողովը փոփոխելով, վերադառնալ երեք կէտերը յանձնվեն փորձառու իրաւաբանի քննութեան և ապա ուղարկվեն պատշաճաւոր իշխանութեան՝ ստանալու Բարձրագոյն թղթաւորութիւն: Ժողովը որոշեց, որ ժողովը հաստատութեան ներկայացնելու համար հարկաւոր է, որ դրամադրութիւն 10% ապահովված լինի, և այդ օրվայ ժողովում ստորագրվեցան 38 հազար ռուբլի:

Ընկերութեան անդամ գրվողները ինչ գումարի էլ որ ուզեցան, կարող են գրվել Թիֆլիսում առևտրական վարչութեան մէջ, ամեն օր, առաւօտեան 8 1/2 ժամից մինչև 1-ը կէսօրվայ, բացի տօն և կիրակի օրերից, իսկ օտարաքաղաքացիք թող դիմեն մեղ նամակով իրանց անդամակցելու ցանկութիւնը յայտնելով, և մենք անմիջապէս կը յայտնենք վերադառնալ վարչութեան և իսկոյն կը պատասխանենք: Ընկերութեան անդամ գրվողներին, ծրարելը հաստատելուց յետոյ, կը յայտնվի, որ վեց ամսվայ ընթացքում ներկայացնեն վարչութեան իրանց ակցիաների գումարները և ապա ընկերութիւնը կը սկսէ իր գործունէութիւնը:

Թիֆլիս. Բ. Արուսեանց

ՆԱՄԱԿ ՀՈՒՇՈՒՅ

Մայիսի 16-ին

Մի երկու օր առաջ պատահութիւն ունեցանք անդրկական Առաւելաձայնի ընկերութեան կառավարչին հետ ժամերով խօսելու: Նա Շուշու վրայով գնում էր Էջմիածին: Անդրկական պատմութիւնից երևաց, որ այդ ընկերութեան հիմնվելու պատճառն եղած է մի 12 տարեկան անգլիացի աղջիկ: Առաջին տարին յիշեալ ընկերութիւնը ծախել է միայն 36 կտոր գլոր, իսկ վերջին, այն է 1891 թվին կարողացել է վաճառել 4 միլիոն կտոր գլոր: Նրա տարեկան եկամուտն ազատ նուէրներից հասնում է 2 միլիոն ռուբլու: Ընկեր-

անհաղ դրութեամբ, իւրային մասերը աւելի թեթեւեղելով, քան թէ ջուրը՝ մի առ ժամանակ հանդարտ պահվելուց յետոյ, բարձրանում են կաթնի երեսին, որոնց ասում ենք սեր:

Կաթը խառնելով, այս իւրային բնութիւնը տրաւելում և միանում են միմեանց հետ. սրա վրա հիմնվելով, ինչպէս յետոյ կը տեսնենք, գործ են ածում խնայելու, որոնց միջոցով կաթը մի առ ժամանակ խառնում են, որից բոլոր իւրային մասերը բաժանվելով՝ միանում են և ստանում ենք այն հասարակ իւղը, որ մենք գործ ենք ածում անտեսութեան մէջ:

Իւղը զանազան կենդանիների կաթի մէջ գտնվում է զանազան քանակութեամբ, այս քանակութիւնը կախված է կաթի յատկութիւնից, առհասարակ կովի վերջին ժամանակները տուած կաթը աւելի շատ իւղ է պարունակում:

Շաքար. Կաթի շաքարը շատ նման է հասարակ գործածվող շաքարին, միայն թէ առաջինը այնքան քաղցր չէ: Շիճուկը շարունակ եփտալուց և բոլորովին ցամաքեցնելուց յետոյ, տակը մնում է մի տեսակ փոշի, որ և է կոչվում է կաթի շաքար. գործ է ածվում միայն բժշկականութեան մէջ:

Աղբը: Կաթի մէջ, բացի հասարակ աղից, գլխաւորապէս գտնվում են ֆոսֆորային երկաթ, կիր և այլն, որոնք կենդանիների ոսկորների զարգացման համար խաղում են ամենամեծ դերը:

Ընկերութիւնը թարգմանել է ս. գլորը 300 զանազան բարբառներով, վարենի երկրներում մինչև անգամ նոր տառեր հնարելով: Նրա գործունէութիւնը տարածվում է քաղաքակրթ Վերելայից մինչև ամենավարենի աշխարհ, որով ընկերութիւնը ունի նա առաջին ս. գլորը ամեն մի աղբի ու ժողովրդի համակալի լեզուին դարձնել և բաժանել գրեթէ ձրիարար, առանց մագի չափ չօշափելու մի ամբողջ աւանդութիւնը, համարում էր և դաւանութիւնը. որովհետեւ ամեն մի սովորութիւն և դադարաւոր սուրբ է մէկի համար, եթէ նա անկեղծութեամբ համոզված է նրանուր Յիշեալ պարոնի էջմիածին գնալու նպատակն այն է, որ խնդրէ ս. սինոդից, որպէս զի վերջինը թարգմանէ ս. գլորը հայոց աշխարհաբար լեզուով և ծախէ ընկերութեան վրա մի որոշ գնով, իսկ ընկերութիւնը գրածախներին միջոցով բաժանէ հայ գիւղերին և քաղաքներին նայն գրքերը, ստանալով գնողներից գրքի կէս կամ քառորդ արժողութիւնը: Նա ասեց, որ ուսուց ս. սինոդը նոյն տեսակ պայման կազմած լինելով ընկերութեան հետ, ստանում է ուսուց լեզուով թարգմանած սուրբ գրքերի համար 50 հազար ռուբլի օգուտ: Բացի սինոդի այդ օգուտից, որքան շահվում է ժողովուրդը, երբ Ռուսաստանը ինքն է տալիս այդ գրքերը: Պարզ է, եթէ արտասահման տպվել, սա կրկնակի ծախս կը նստէր ընկերութեան և հետեւապէս ուսուց ժողովուրդը տարված կը լինէր աւելի թանկ գնով ձեռք բերել այդ գրքերը: Նոյն օգուտները կարելի է սպասել, եթէ ս. գրքի հայերէն թարգմանութիւնը և տպագրութիւնը կատարվի ոչ թէ արտասահմանում, ինչպէս մինչև հիմա է եղած, այլ Էջմիածնում: Մի կողմը թողնելով այդ նիւթական օգուտները, որքան բարոյական օգուտ կուտանանք մենք, եթէ այդ սուրբ գործը մենք մեր ձեռքերով անենք, փոխանակ ուրիշներին թողնելու:

Ի. Մ.

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱՅՏԱՅԻՅ

Մայիսի 5-ին

Հրազդան գետի եղբրքում, ափից 3 քառորդ վերստ հեռավորութեամբ, ընկած է հարեան Աղփարա կոչված հայ գիւղը: Այդ գիւղի բնակիչները թէպէտ պարսպում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մասամբ բանջարացանութեամբ, սակայն այդ գիւղացիների միճակը, տրնտեսական ապահովութեան տեսակէտից, այնքան էլ նախանձելի չէ: Այդ գիւղի ժողովուրդը թրջուտա դրութեան մէջ է և աղքատ: Այդ նրանից է, որ 86 և 89 թվականներին նրանց հացի բերքը փչացաւ թէ կարկտից, թէ չափազանց անժամանակ տեղացող անձրևներից և թէ բնական այլ և այլ պատահարներից: Բացի դրանից, անցեալ 90 թվ գարնանը նրանք չը կարողացան կանոնաւոր ցանք անել՝ սերմացու շատ քիչ ունենալու պատճառով:

Յիշեալ Աղփարա գիւղի վարեւաճողերը չեն բաւականացնում գիւղացիների երկրագործական

պահանջներին: Այդ պատճառով նոյն այդ գիւղացիներից աւելի ունեւորները, ինչպէս և Մաքրավանք, Գաթվանաւարայ և այլ հարեան գիւղերի բնակիչները, ստիպված են լինում փողով հողատեղ գնել այստեղի, Ներքին-Ախտայի մալականներից և ցանել: Իսկ այդ վերջինները այդ դէպքում, յայտնի բան է, ծախում են հայերին իրանց անպարարտ արտերից, որոնք աւելի մնացած (յոգնած) են լինում: Մի անգամ ցանելու համար, իբրև վարձ, հայերը վճարում են մալականներին մի սաժնի վարեւաճողի (երկարութիւնը 100 սաժնի է, որը հաւասար է 10 խոր սաժնի) համար 20—30 կոպէկ:

Հողի պակասութեան պատճառով այդ գիւղացիները խնդրեց են ներկայացրել կառավարութեանը՝ իրանցը նոր հողատեղ տալու առիթով և յոյս կայ, որ շուտով կը կատարվի այդ, որովհետեւ Մաքրավանքի գիւղացիներին արդէն տրվեց նոր հողատեղ (56 դեսեստին) «պոլպոշու» անունով: Երբ արեւմտական աղատ խոտատեղերից, որոնք 18—20 վերստ հեռավորութիւն ունեն մեր յիշած գիւղերից և որոնք գտնվում են Նոր-Բալաղէտի գաւառում:

Կարմիր կիրակի օրը, մայիսի 12-ին, այդ Աղփարա գիւղում, սաստիկ անձրևի միջոցին, 12 հատ եղջիւրաւոր անասուններ կայծակի մի հարուածի զոհ գնացին: Այդ դէպքը վատացրեց աղքատ գիւղացիներին, որոնք զրկվեցին իրանց անասուններից—կաթնատու կովերից: Չարմախային այն է, որ, ինչպէս տեսնողները պատմում են, բոլոր անասունները, չանթի ուժգին հարուածից, մի կողմի վրա ընկնելով՝ հէց տեղն ու տեղ մեկը քիւրդ է, ուշաթափված տուն են բերում: Հետեւեալ օրը, ամսիս 13-ին, այստեղի մալականներին մի ձին նոյնպէս կայծակնահար եղաւ:

15 օրից աւելի է, որ անդադար անձրևում է: Այդ պատճառով հացի ցանքը այս կողմերում դեռ չարունակվում է, այն ինչ, անցեալ տարի ցանքը վերջացել էր նոյն իսկ մարտի վերջին: Հողագործ դասակարգը տրտնջում է, որ շատ ուշ է ցանում և շուտին այն միջոց են յայտնում, թէ մայիսի 20-ից անց ցանք անելը բոլորովին ապարդիւն է: Բայց այդ կարծիքը սըլաւ է, որովհետեւ Շաղկաձորը մի այնպիսի օդաբաժին ունի, որ այսօրվայ ցանած արտի մակեան աղեղեղութեամբ, սկսում է ծփալ նորածիլ կանաչ հացադոյտով:

Թորաւատ անձրևների չնորսով ամեն կողմից հեղեղներից դոյացած բաղմամբ առուակները թափվում են Հրազդան գետը, որը հետզհետէ վարարելով՝ սպառնալիք է կարգում անցնողներին: Տարի չէ անցնում, որ մի քանի զոհեր կուլ չը գնան այդ գետին, մասնաւոր գարնան այս միջոցին: Նա անխնայ լափում է իր մէջն ընկածներին, քանգում է իր վրա ունեցած փայտեայ կամ մուրջները և տակովն է անում շատ անասուններ: Անցեալ օր Սոլակ գիւղացի մի 8—9 տարեկան պատանի զոհ գնաց Հրազդանի ժրմիւրն:

տարվայ մէջ, միջին թուով հաշուով 300 օր, և տուած կաթի թիւը օրական հաշուով 13 կրոժկա \*) ընդամենը կը տայ 3900 կրոժկա, այս կաթի մի մասը ուտում է նոր ծնած հորթը մինչև 15 օր. նրա կերածն էլ միջին թուով հաշուելով 200 կրոժկա, ուրեմն իւրաքանչիւր կով իր կաթնատուութեան ժամանակը տալիս է 3700 կրոժկա կաթ, որը քիչ բան չէ:

Այժմ կաթը: Սպիտակագոյն և երբեմն էլ շատ քիչ դեղնագոյն է. այժմ կաթը հարուստ է բնապահարային մասերով, այս պատճառով զլխաւորապէս գործ է ածվում պանիր չինելու համար:

Ոչխարի կաթը: Այս կաթը սպիտակադեղնագոյն է. հարուստ է իւրային մասերով: Ոչխարի կաթը տալիս է սպիտակ, իւղալի և շատ ախորժիկ համով սեր, բայց սրանից պատրաստված իւղը չուտ է կծկում:

Ձիւռ կաթը: Ձիւռ կաթը միւս բոլոր կաթերից զանազանվում է նրանով, որ չոր մասեր (բնապահար, սպիտակուց, իւղ) շատ քիչ է պարունակում, այն ինչ մեծ քանակութեամբ շաքար ունի իր մէջ, կապտագոյն է և անուշահոտ:

Ինչպէս վերին ասեցի, կաթ արտահանվում է

\*) Կրոժկա Ռուսաստանում գործածվող հեղուկի չափս է և հաւասար է մօտաւորապէս մի ֆունտին:

կոհակներին, որի դիակը անհետացաւ ջրի խորքերում: Աղիւսա գիւղից նոյնպէս մի երեխայ քիչ էր մնում խեղդվել նոյն այդ գետում, եթէ մի փոքր ուշ հասնէին աղատողները...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ստացանք 5 ռուբլի գնդապետ իշխան Ե. Բեկթաթեկովից յօգուտ չբաւոր հայ ուսանողների Պարիզում տրված պարահանդիսի: Նախկին փողի հետ անում է 161 ռուբլի 90 կոպէկ:

Շաքարի օր, մայիսի 18-ին, Թիֆլիսի հայ դեռասանական խումբը պ. Պետրոսեանի մասնակցութեամբ ներկայացրեց Թիֆլիսի թատրոնում Ջիակովշի «Ռճրագործի ընտանիք» պիէսան: Պ. Պետրոսեան, պէտք է խոստովանված, մի ինքնուրոյն գոյն է տալիս Կորդաղոի դերին. նա ներկայացնում է մի բարեխոս, ճնշված, հաւածված, մի մի անգամ վաւովող ու բարկացող, բայց հեշտ հաւատացող մարդու տիպ: Պետրոսեանի կազմուածքը և տեսքը տպագրութիւն գործող են: Գրիմը լաւ է. նա ունի վարենացած, բայց բարի մարդու դէմքը: Սակայն շարժումները միակերպ են ամբողջ պիէսայի ընթացքում: Մի և նոյն ժամանակ բեմի վրա էլ զգալի է Պետրոսեանի այն պակասութիւնը, որ մենք նկատեցինք նրա մէջ, երբ նա կոնցերտներում բանաստեղծութիւններ էր կարդում. դա թոյլ յիշողութիւնն է, որ մոռացնել և խառնել է տալիս նրան բառեր: Մնացած դերասանները և դերասանուհիները իրանց խաղով չէին փչացնում ամբողջութիւնը, թէև, ինչպէս միշտ հայոց բեմի վրա, չը կար կենքը, շարժում, վառ գործողութիւն պիէսայի մէջ: Մեր բոլոր դերասաններին և դերասանուհիներին խաղի մէջ միշտ նկատվում է մի սպանիչ միակերպութիւն... Գիկցիան միակերպ է, խօսակցիները ժամերով մի և նոյն տեղի վրա կանգնած են լինում, ոչ ոք տեղից չէ շարժվում, ոչ ոք չէ նստում... Կամ բոլորն էլ կանգնած են մնում, կամ բոլորն էլ միանգամից նստում են: Թատրոնը լի չէր:

Թիֆլիսի աղետակների կառուածական բանկի ժողովը պարագամունքները վերջացան մայիսի 19-ին: Բանկի վարչութեան նախագահ Կրկին ընտրված է 321 ձայնի առաւելութեամբ ընդդէմ 58-ի իշխան իլիա Ջօվճալաճէ: Իսկ բանկի դիրեկտոր իշխան Դ. Աւարով, փոխանակ իշխան Ի. Մաչաթելի, որը հրաժարվեց իր պաշտօնից:

Հինգաթիւ մայիսի 23-ին, Թիֆլիսի կալուածական բանկի թատրոնում կը սկսի իր գաստրօլները երեկի ուս դերասանուհի Մարիա Նիկոլայիւնա Նրոյովա: Առաջին անգամ Թիֆլիսի հասարակութեան առաջ նա բեմ դուրս կը գալ Սուլօրինի «Տատիանա Բէպինա» դրամայում:

Կամ նոյնութեամբ կլիւելուց ամիջապէս յետոյ, կամ նրանից պատրաստում են իւղ և պանիր: Այն գործարաններում, ուր պանիր են պատրաստում, նոյն կաթից հանում են և իւղ, մասնաւոր կերպով կաթնում են, որ պատրաստած պանիրը չար չը լինի, այնպէս այնպիսի պանիր, որը շատ քիչ իւղային մասեր է պարունակում (մանրամասնութիւններն իր ժամանակին):

Պատրաստված իւղը վաճառվում է զանազան գներով, նայած նրա յատկութեան. այս պատճառով առաջին տեսակի և մաքուր իւղ ստանալու համար, հարկաւոր է լաւ իմանալ պատրաստութեան ձևը: Բացի լաւ իւղ ստանալուց, գլխաւոր և ձեռնուռ նպատակներից մէկն էլ այն է, որ պէտք է աշխատել որքան կարելի է կաթի մէջ պարունակված ամբողջ իւղը հանել:

Հետեւեալ յօդուածներով հետզհետէ կը նկարագրեմ առհասարակ իւղի և զանազան տեսակ պանիրների պատրաստութիւնը, կաթնարանների (պանիր և իւղ պատրաստելու գործարանատուն) կազմակերպութիւնը, կաթնատնտեսական ընկերութիւնների անհրաժեշտութիւնը և կանոնադրութիւնը, կաթնատու կենդանիների պահպանութեան ձևը, կաթնատնտեսութեան մնացորդները և աղբի գործածութիւնը, և այլն:

Պարիզ. Թ. Մելք-Բախտամյանց



